

## ՅԱԶՈՂ ԹԱՆԱՆ, ԲԱՅՑ ՓԱԽՈՒՄՏԻ ԶԱԽՈՂ ՓՈՐՁ

Ներքին ապահովության ուժերու ընդհանուր տնօրէնութիւնը յայտարարեց, որ ձերբակալած է 1983-ի ծնունդ լիբանանցի մը, որ ըլլալով Զամրայի մէջ գործող դրամատան մը նամակատարը, յաջողած է թալանել Կեդրոնական դրամատունէն իրենց մօտ փոխադրուող 429 հազար տուարի գումար պարունակող պարկը եւ ուղղուիլ Պէյրութի օդակայան՝ ափրիկեան երկիր մը հասնելու մտադրութեամբ: Ընդհանուր հետաքննչներուն, ծրագիրը ձախողութեան մատուցած ու ձերբակալուած է նաեւ աւազակին լիբանանցի յանցակիցը, որ օգնած էր կազմակերպել Ափրիկէ փախուստը՝ թալանուած գումարը հաւասարապէս բաժնելու նախապայմանով:

## ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՎՃԻՌԸ

Հայաստանի մէջ երէկ եզրափակուեցաւ նախանցեալ օր տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններուն մասնակցած քաղաքացիներուն ջուրներու նախնական հաշուարկը եւ ի յայտ եկաւ, որ Հայաստանի ժողովուրդին զգալի մեծամասնութիւնը վերահաստատած է իր վստահութիւնը վարչապետ Նիկոլ Փաշինեանի քաղաքականութիւններուն, եզրափակելով քանի մը ամիս տեւած նախընտրական փուլը, որ ծրագրերու փոխարէն հարուստ էր զրպարտութիւններով, դաւաճանութեան ամբաստանութիւններով, ահազանգներով եւ ներքին ու արտաքին,



բացայայտ ու ծածուկ սպառնալիքներով: Կեդրոնական ընտրական յանձնաժողովը երէկ հրապարակեց բոլոր 2005 ընտրատեղամասերուն նախնական արդիւնքները, որոնք ցոյց տուին, թէ ընտրականութեան մասնակցած է 1 միլիոն 477 հազար 736 ընտրող: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութիւնը ստացած է ջուրներուն 49,825 առ հարիւրը (727.827 ջուր), Սամուէլ Կարապետեանի գլխաւորած «Ուժեղ Հայաստան» դաշինքը՝ 23,281 տոկոս (340.088 ջուր), Ռոպերթ Զոհարեանի գլխաւորած «Հայաստան» դաշինքը՝ 9,934 տոկոս (145.113 ջուր), իսկ Գագիկ Ծառուկեանի առաջնորդած «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը ստացած է ջուրներուն 3,996 առ հարիւրը եւ չէ կրցած մուտք գործել Ազգային ժողով, որովհետեւ չէ հատած կուսակցութիւններուն համար չորս առ հարիւրի նուազագոյն սահմանը: Այսուհանդերձ, Կեդրոնական ընտրական յանձնաժողովը երէկ մինչեւ ուշ գիշեր կը շարունակէր ստուգումները, որոնք հիման վրայ պիտի յստականայ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան խորհրդարան մուտք գործելու ճակատագիրը, առանց ազդելու արդիւնքի ընդհանուր պատկերին վրայ: Մնացեալ կուսակցութիւնները ստացած են շատ քիչ ջուրներ եւ չեն կրնար հասնիլ Ազգային ժողով: Այս արդիւնքներուն հիման վրայ, Փաշինեանի խմբաւորումը ստացած է խորհրդարանական աթոռներուն 3/5-ի զգալի մեծամասնութիւնը՝ 64 աթոռ, ընդդիմադիրներու 29 եւ 12 աթոռներուն դիմաց, ինչ որ անոր կը շնորհէ բազմաթիւ օրէնքներ վաւերացնելու եւ նշանակումներ կատարելու կարողութիւն, սակայն առանց հասնելու 2/3-ի բացարձակ մեծամասնութեան, որ կրնար դուրս բանալ առանձին սահմանադրական փոփոխութիւններ կատարելու հնարաւորութեան: Ընտրութիւններուն հետեւող դէտերը ընդհանուր առմամբ խօսեցան մրցակցային պայմաններու առկայութեան մասին, սակայն ահազանգեցին որոշ ճնշումներու եւ խախտումներու մասին: Եւթեք, որ 7 Յունիսի ընտրութիւններուն մրցանշային եղած է անվաւեր համարուող ջուրներուն թիւը՝ 17.097 ջուր, մինչ 2021-ին անվաւեր էր ընդամենը 4.593 ջուր:

### ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԸՆՏՐԱՆՔ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան ընտրացանկը գլխաւորող վարչապետ Նիկոլ Փաշինեան երէկ

առաւօտեան կանուխ յայտարարեց խաղաղութեան ամբաստանութիւն լոզունգին վրայ հիմնուած իր խմբակցութեան յաղթանակը եւ խորագրեց գալիք փուլին սպասուած քայլերը՝ ներառեալ Ատրպէյճանի հետ TRIPP նախագիծին գործադրութեան սկիզբ եւ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու ամբողջական կարգաւորում: «Հայաստանի Հանրապետութեան ժողովուրդը իր ընտրականութեամբ տեր կանգնեցաւ Հայաստանի Հանտապետութեան, պետութեան, անկախութեան, ապագային, խաղաղութեան», ըսաւ Փաշինեան՝ անելցնելով, որ «ժողովուրդը կը պահանջէ արմատախիլ ընել պատերազմի եռագլուխ կուսակցութիւնը» (նկատի ունի ընդդիմադիր գլխաւոր երեք ուժերը): Նախկին նախագահ Ռոպերթ Զոհարեան մտադրութիւն յայտնեց վիճարկելու ընտրութեան արդիւնքները, նկատի առնելով ճնշումները, ընդդիմադիրներու հետապնդումները եւ վարչական միջոցներու գործածութիւնը, իսկ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը պահանջեց վերահաշուարկ: Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեան յայտնեց, որ ընտրական հոլովոյթը ընտրութիւն էր Հայաստանի ժողովրդավարական մշակոյթին եւ պետականակերտումին համար: Իսկ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան շեշտեց, որ կառավարութիւնը պիտի շարունակէ ուղին, իսկ այսպիսով կը փակուի բռնատիրութեան էջը Հայաստանի մէջ:

### ՄԻՋԱԳԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՆ

Եւրոպական երկիրներուն մեծամասնութիւնը փութաց շնորհաւորել վարչապետ Փաշինեանը: «Չնայած ճնշումներուն, Հայաստանի ժողովուրդը հաստատօրէն ընտրեց ժողովրդավարութիւն ու խաղաղութիւնը», յայտնեց Գեր-



մանկոյ վարչապետը, իսկ Ֆրանսայի նախագահը պատրաստակամութիւն յայտնեց շարունակելու երեւանի հետ սերտ համագործակցութիւնը: Ընտրութեան արդիւնքներուն համար Փաշինեանը շնորհաւորեցին նաեւ Դանիոյ, Լիթուանիոյ, Լաթվիոյ, Աւստրիոյ, Շուէտի, Յնդկաստանի եւ այլ երկիրներու առաջնորդներն ու ներկայացուցիչները՝ համագործակցութեան ձեռք մեկնելով Փաշինեանին, իսկ Լեհաստանի վարչապետ Տոնըշտ Թուսք Նշեց, որ հայերը այսպիսով ընտրած են եւրոպամետ ուղղութիւնը: Մոսկուա միւս կողմէ յայտարարեց, թէ Ռուսիայի Կովկասի մէջ տիրող վիճակը կը պահանջէ սեւեռուն ուշադրութիւն, իսկ նախագահութեան բանբեր Տիմոֆի Փեսքով կը նշէր, որ սպառնալից արդիւնքներու վերջնական պատկերին: Թուրքիոյ Արտաքին գործերու նախարարութիւնը գոհունակութիւն յայտնեց, որ ընտրութիւնը կատարուած է խաղաղ եւ հանդարտ մթնոլորտի մէջ, յուսալով որ «Հայաստան անելի համարձակ քայլերու կը ձեռնարկէ տարածաշրջանին մէջ խաղաղութիւնը ամրապնդելու ուղղութեամբ»: Արտաքին գործերու նախարար Յաքան Ֆիտան մաղթեց, որ շուտով կարգաւորուին նաեւ հայ-ատրպէյճանական յարաբերութիւնները, շեշտելով որ Ռուսիայի Կովկասի մէջ բացուած է խաղաղութեան հնարաւորութիւններու պատուհան մը:

## ՀԱԿԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱԳԼՑՈՂԱԿԱՆ ԵՂԹԱՅ

Շատ երկար չտեւեց շաբաթ մը առաջ ամերիկեան միջնորդութեամբ Լիբանանի եւ Իսրայէլի միջեւ յայտարարուած եւ «Պէյրութը Իսրայէլին դիմաց» հաւասարակշռութեան վրայ հիմնուած զինադադարը: Լիբանանի պետական բարձրաստիճան անձնաւորութիւններուն յոր-



դորները անտեսելով զինադադարը ի սկզբանէ մերժած Յրզպալլա նախանցեալ օր հրթիռներ արձակեց հարաւային սահմանէն այն կողմ, յայտարարելով իսրայէլեան դիրքերուն մեծ վնաս պատճառելու մասին, որուն հակադարձութիւնը շատ չուշացաւ եւ իսրայէլեան օդուժը իսկոյն քանի մը հարուած ուղղեց Պէյրութի հարաւային արուարձաններու Սրէյժէ շրջանին՝ յայտարարելով Յրզպալլայի կեդրոններ թիրխաւորելու մասին: Ըստ Առողջապահութեան նախարարութեան, Սրէյժէի մէջ մահացած է չորս հոգի, վիրաւորուած քսան ուրիշներ՝ ներառեալ չորս կին ու չորս երեխայ: Յրզպալլայի հրթիռարձակումները շարունակուեցան նաեւ երէկ առաւօտեան, իսկ իսրայէլեան բանակը յայտարարեց հարաւային Լիբանանի մէջ երկու զինուոր եւս կորսնցնելու մասին, ապա շարունակեց գործողութիւնները՝ հարուածելով հարաւային շարք մը շրջաններ: Իսրայէլեան օդուժը



Խարտալի շրջանին մէջ 6 Յունիսի կործանած էր լիբանանեան բանակի զինակառք մը, որուն մէջ նահատակուեցան զօրավար Ռուհամ Սապրան, բարձրաստիճան սպայ մը եւ զինուոր մը: Բանակին թիրախաւորումը դատապարտուեցաւ ոչ միայն Լիբանանի կառավարութեան, այլ եւ ՌՈՒՄԻՖԻԼ-ին ու Շոցի արաբական կառավարութիւններուն եւ Իրանի կողմէն: Ըստ Առողջապահութեան նախարարութեան նորագոյն տուեալներուն, առճակատումի նորագոյն փուլին Լիբանանի մէջ ցարդ մահացած է 3.637 մարդ, վիրաւորուած՝ 11.188 ուրիշներ:

### Շարունակութիւնը տեսնել էջ 2

## ԶԱՅՆԵՐ ԿԻՊՐՈՍԷՆ

(Կազուիթային արձագանգ) - 1



Դարձեալ, առաջին անգամ է որ այս սիւնակին մէջ տեղ կը բանակը Կիպրոսին, անելի ճիշդ՝ կիպրահայ գաղութին:

«Կզդի նման չիք մեր Կիպրեայ...» երգած էր Նահապետ Ռուսինեան, շուրջ 160 տարի առաջ:

Փոքրաթիւ է Կիպրոսի գաղութը, հաւանաբար նուազ քան երկու հազար հոգի, բայց ունի պատմական անցեալ: Դրան ապրած ու գործած են սփիւռքեան երեւելի ինչ-ինչ դէմքեր, մերթ ժամանակաւոր, մերթ մնայուն կեցութեամբ:

Միջերկրականեան այս գեղեցիկ կղզին երկփեղկեալ է 1974-էն ի վեր: Դրողատարածքին շուրջ 40 առ հարիւրը ձեռքն է թուրքերուն, որոնք 1983-ին այնտեղ հռչակած են «Հիւսիսային Կիպրոսի Թուրք Հանրապետութիւն»-ը, գոր կը կոչեն «Եւրոկիպրոս» (ձագուկ կամ կրտսեր հայրենիք): Թուրքիա, միջազգային մեծ ու փոքր ամեն հարթակի վրայ, հետեւողական կերպով ու անտեղիտալիօրէն նեցուկ եւ պաշտպան կը կանգնի թրքական Կիպրոսին: Թոյլ չի տար, որ ան ընկրկի կամ տկարանայ դոյզն չափով իսկ...

### (Շարունակութիւնը տեսնել էջ 2)

## BEY-ԻՆ ԿՈՂՔԻՆ KYE

Գործնականացումի ուղիին վրայ դնելով կառավարութեան գլխաւոր խոստումներէն մէկը, վարչապետ Նաուաֆ Սալամ պաշտօնապէս տուաւ Աքքարի Բլէյթաթ շրջանին մէջ



անտեսուած օդակայանը վերագործարկելու ազդանշանը: Սալամ եւ հանրօգուտ աշխատանքներու եւ փոխարկութեան

հարցերու նախարար Ֆայեզ Ռասամի օդանաւով Պէյրութն ուղղուեցան Աքքար եւ ուղղակի վայրէջք կատարեցին Սուրիոյ սահմանէն ընդամենը քանի մը քիլոմէթր հեռու գտնուող Ռընէ Մուաուատի անուան օդակայանին մէջ:

Այնտեղ կազմակերպուած հանդիսութեան ընթացքին Սալամ յայտնեց, որ օդակայանը գործարկելու աճուրդը շահած Sky Lounge Services ընկերութիւնը կարճ ժամանակի մէջ պիտի վերականգնէ օդակայանը եւ զայն արդիակալանացնէ, որպէսզի կարելի ըլլայ զայն գործածել միջազգային թռիչքներու համար: «Բլէյթաթի օդակայանին կրեանքը վերադարձնել կը նշանակէ վերատիրանալ պետութեան գաղափարին», ըսաւ վարչապետը՝ խոստանալով, որ այսուհետեւ Լիբանանի մէջ պիտի չըլլան մոռացութեան ենթարկուած շրջաններ: Ան անդրադարձաւ նաեւ ապօրինի գէնքի հարցին, յիշեցնելով որ Թայէֆի համաձայնութեան ամբողջական գործադրութեան համար անհրաժեշտ է լուծել գէնքի հարցը: Ամերիկացի դեսպանն ալ շատ դրական որակեց Ռաշիկընի մէջ լիբանանեան-իսրայէլեան բանակցութիւնները: Եւթեք, որ օդակայանը պիտի կրէ KYE նշանը, Պէյրութ օդակայանին (BEY) հետ ձեւաւորելով Լիբանանի միջազգային օդակայաններու ցանցը:

# ՀԱԿԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱԳԼՑՈՂԱԿԱՆ ԵՂԹԱՅ

Շարունակում է 1-ին

## ԻՐԱՆ-ԻՍՐԱՅԷԼ ԱՌՃԱԿԱՏՈՒՄ ԳՆԱՎԱԿԱՆ ԱՐԱՐ

Որպես հակադարձություն Պեյրոուի հարաւային արուարձաններու թիրախաւորումին, Իրանի յեղափոխական պահակազոււոը հրթիռներ արձակեց իսրայէլեան շարք մը դիրքերու վրայ, մինչ Իսրայէլի կառավարութիւնը երկրով մէկ փակ յայտարարեց կրթական հաստատութիւնները եւ արգիլեց ժողովրդային հաւաքները: Նախանցեալ գիշեր ու երէկ առաւօտեան Իսրայէլ հակադարձեց ճգնաժամային իր ուղղած հարուածին Իրանի հակադարձութեան՝ շարք մը թիրախներ ուժգնեցնելով Իրանի կեդրոնական եւ արեւմտեան հատուածին մէջ: Իսրայէլեան բանակին համաձայն, գործողութիւնը կեդրոնացած է պաշտպանու-



թեան ռազմավարական համակարգերուն վրայ, իսկ յարձակումներէն մէկն ալ հասաւ Մահշահր քաղաքի քիմիական նիւթեր արտադրող գործարանի մը, որմէ ետք Իրան հրթիռակոծեց Զայֆայի քիմիական արդիւնաբերութիւնը: Թեհրանի իշխանութիւնները երէկ փակեցին երկրին մէջ գործող բոլոր օդակայանները, իսկ եմէնի տիրող հուսիներուն Անսարալլա կազմակերպութիւնն ալ յայտարարեց Կարմիր ծովուն մէջ իսրայէլեան նաւերուն նաւարկումը արգիլելու մասին: Իրանի զինուած ուժերը երէկ կէսօրին յայտարարեցին Իսրայէլի դէմ յարձակումներուն նորագոյն ալիքը դադարեցնելու մասին, միաժամանակ զգուշացնելով, որ աւելի ուժգին պիտի հակադարձեն, եթէ Իսրայէլ վերստին թիրախաւորէ Իրանը կամ Լիբանանը: Իրանի Արտաքին գործերու նախարարութիւնն ալ համացանցի վրայ հրապարակեց Լիբանանի զօրակցող գրառում մը, հաւաստիացնելով որ «Լիբանան անբակտեղի մաս կը կազմէ գիւնդարարի համաձայնութեան, իսկ Ուաշինկթըն կը կրէ իսրայէլեան խախտումներուն պատասխանատուութիւնը»: Միացեալ



Նահանգներու նախագահ Տոնըլտ Թրամի իր կարգին յստակացուց, որ Իրանն ու Իսրայէլը կը ձգտին զինադադարի, թէեւ ծովային պաշարումը պիտի շարունակէ գործել, մինչեւ վերջնական համաձայնութեան կնքումը: Ան նախապէս հեռաձայնով խօսած էր Պենիամին Նեթանիա-հուի հետ ու յստակացուցած, թէ Իրանի հարցով որոշումներ կայացնողը ինքն է, ոչ թէ Իսրայէլի վարչապետը, իսկ վերջինս պետք է պարզապէս գործադրէ որոշումը եւ ընդունի Իրանի հետ լուծումը:

## ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԵՆԱՇԵՆՈՐՅ

Ամերիկեան լրատուամիջոցներ հաղորդեցին, որ Ուաշինկթընի մէջ լիբանանեան-իսրայէլեան բանակցային հերթական նիստը սկզբունքով պիտի գումարուի 22 Յունիսին: Պեյրոուի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Միշէլ Իսա երէկ տեսակցեցաւ հանրապետութեան երեք պետերուն



եւ անոնց տեղեկացուց, որ Իսրայէլ դարձեալ պիտի չհարուածէ Պեյրոուի հարաւային արուարձանները, եթէ ճգնաժամ դադարեցնէ հրթիռարձակումները: Ան հարաւէն հրթիռարձակումը համարեց քաղաքական պատգամ մը, աւելցնելով որ Ուաշինկթըն որոշած էր կանխել մագլցումի ընդարձակումը: Վարչապետ Նաուաֆ Սալամ դեսպանին վերահաստատեց, որ ոչ մէկ կողմ կրնայ Լիբանանի անունով բանակցիլ, բացի Լիբանանի կառավարութենէն: Եւրոմիութիւնը իր գորակցութիւնը յայտնեց Լիբանանի կառավարութեան եւ բանակին, բոլոր կողմերէն պահանջելով յարգել զինադադարը:

# ԶԱՅՆԵՐ ԿԻՊՐՈՍԷՆ

(Շարունակում է 1-ին)

Մենք՝ հայերս, 1926-էն սկսեալ, Նիկոսիոյ մօտակայքը կրցած էինք կեանքի կոչել փառաւոր կրթօճախ մը՝ Մելգոնեան Կրթական Զաստատութիւնը, որ ձեռնհասօրէն հովանաւորուեցաւ Զ.Բ.Ը.Միութեան կողմէ՝ լման 80 տարի: Ի՞նչ անկրկնելի սերունդ մը կոփուեր էր անոր գրասեղաններուն տակ, ու ի՞նչ պատկառելի ուսուցիչներ պաշտօն վերցուցեր էին այնտեղ: Դժբախտաբար, գիշերօթիկ այս կրթօճախը ընդմիջու փակուեցաւ 2005-ին, հարաւային Կիպրոսի Եւրոմիութեան անդամակցութենէն տարի մը ետք...: Ի՞նչ հեզնակը: Միւնչդեմ, կը խորհիլք որ նպատակաւոր տեսլականով ու խելացի մատակարարումով մը, - որուն ձեւերն ու եղանակները անձնաօթ չէին կրնար ըլլալ Բարեգործականի նման փորձառու կազմակերպութեան մը, - Կիպրոսի Եւրոմիութեան անդամակցութենէն բխած բազմապիսի բարիքներէն ալ օգտուելու միտումով, այս եզակի ու պատկառելի կրթօճախը կրնար յաջողապէս շարունակել իր առաքելութիւնը, վայելելով ինչ-ինչ իւրախատուկ առանձնաշնորհումներ՝ ընդ հովանեաւ կիպրական բարեխնամ ու հայասեր պետութեան...: Չեղաւ: Զ.Բ.Ը.Մ. -ի օրուան դեկլարութիւնը անդրուելիօրէն կառչած մնաց փակումի իր որոշումին: Ափսոս՛:

Մելգոնեանի շիջումով, այժմ, Կիպրոսի մէջ կը մնայ լոկ Նարեկ հայկական վարժարաններու ցանցը՝ Նիկոսիա, Լիմասոլ եւ Լառնաքա: Այս դպրոցներուն մէջ, - ուր միայն հայ աշակերտներ կը յաճախեն, - ուսումը գրեթէ ձրի է, որովհետեւ կիպրական պետութիւնը հետեւողականօրէն կը հոգայ անոնց նիւթական բոլոր կարիքները (տարեկան շուրջ 1,3 միլիոն եւրո...): Ուրիշ ո՛չ մէկ երկրի մէջ այսպիսի դրութիւն գոյութիւն ունի:

Կիպրոսի հայ գաղութին ու անոր եկեղեցական, կրթական ու ռազմային կառուցներուն մասին կայ բաւական ճոխ գրականութիւն: Գո՛նէ յիշեցէ Կիւլետերեան Բաբբէն թառնակից կաթողիկոսի «Յայ-Կիպրոս. հայ գաղութը եւ Ս. Մակար» երկը (Անթիլիաս, 1936), Ղեւնդ եպս. Չէպեանի «Յիշատակարան կիպրահայ գաղութի»-ն (Անթիլիաս, 1955), Վարուժան արք. Զեքեղեանի «Յայաստանեայց եկեղեցին Կիպրոսի մէջ» ալպումը (2003), Զայկաշէն Ուզունեանի պատմագիրքը (Նաեւ անվերելի թարգմանութեամբ)՝ Մելգոնեան Կրթ. Զաստատութեան մասին, ու դեմ վերջերս՝ հայաստանաբնակ լրագրող Սագօ Արեանի «Բաժնուած կղզին» գրոյցներու ժողովածուն (Երեւան, 2024):

Կիպրոսի մէջ Զայց. եկեղեցին ունի ինչ արմատներ: Իր աշխարհագրական մօտիկութիւնը Կիլիկիոյ հայ թագաւորութեան՝ մեծապէս նպաստած է այս երեւոյթին: Առանց թափառելու պատմութեան բաւիղներուն մէջ, պարզապէս վկայակոչեցէ Օրմանեանը, որ իր «Ազգապատում»-ին մէջ խօսելու առթիւ 1179-ի Զոնմկայի նշանաւոր համաժողովին մասին (որ գումարուեցաւ Գրիգոր Տղայ կաթողիկոսին նախագահութեամբ՝ քննարկելու համար յոյն եկեղեցոյ հետ միութեան հարցը), կու տայ անուանացանկը թեմակալ այն առաջնորդներուն կամ եպիսկոպոսներուն, որոնք անձամբ մասնակցութիւն բերին այդ ժողովին: Եւ հոն կը յիշատակուի Կիպրոսէն ժամանած Թադէոս եպս. մը: Ուշագրաւ տուեալ մըն է այս, հաստատելու համար, որ ԺԲ դարուն հայ եկեղեցին արդէն թեմական կամ հովուական կառոյց մը ուներ Կիպրոսի մէջ:

1963-ի յոյն-թրքական համայնքային բախումները պատճառ դարձան, որ Նիկոսիան մասնատուի, անոր մէկ մասը ինչպէս թրքական գրաման տակ: Զայեղը խուճապահար իտեռացան այդ շրջաններէն՝ հոն թողլքելով իրենց բնակարանները, դպրոց, ակումբ, եկեղեցի: Յետոյ վրայ հասաւ 1974-ի թրքական ներխուժումը, որ գործնականօրէն երկուքի բաժնեց կղզին...: Գրաւեալ տարածքին մէջ մնաց նաեւ հնադարեան Ս. Մակարայ հայկական վանքը, Պետտա-տաքթիլոյի լեռնաշղթային վրայ, Զալէֆկա գիւղին մօտ:

Կիպրահայութիւնը 1981-ին Նիկոսիոյ մէջ կառուցեց նոր եկեղեցի մը (Ս. Աստուածածին), ՆԱԲԵԿ վարժարանի նորաշէն դպրոցաշէնքին կից, որ բացուած էր 1972-ին: Էանի մը տարի յետոյ ալ բարձրացաւ ազգ. առաջնորդարանի նոր շէնքը, նոյն տարածքին վրայ: Միւս քաղաքներու հայկական եկեղեցիները աւելի ինչ են: Լառնաքայի Ս. Ստեփանոսը կառուցուած է 1909-ին, Լիմասոլի Ս. Գեորգը՝ 1939-ին: Երկու քաղաքներու ՆԱԲԵԿ վարժարանները են, վերջին տասնամեակներուն, տեր դարձեր են նորաշէն դպրոցաշէնքերու, միշտ պետական օժանդակութեամբ: Լառնաքան նոր շէնքով օժտուած է 1996-ին, իսկ Լիմասոլը՝ 2008-ին:

Կիպրոսի մէջ, ներկայիս, կը թուի թէ հայերէն տպագիր մամուլ չկայ: 90-ականներուն հոնկէ կը ստանայիլք «Արձազանգ» ամսաթերթը (Զ.Յ.Դ.), աւելի առաջ՝ Զ.Բ.Ը.Մ. -ի Լառնաքայի «Տեղեկատու»-ն (1973-էն մինչեւ 80-ականներ, մեքենագիր-բազմագրուած, որ կը խմբագրէր Կարապետ Փափագեանը): Դարձած են ասոնք, ինչպէս դարձած են երբեմնի տպագիր «Փարոս»-ն ու «Ազատ Ձայն»-ը, որոնք երեւցած էին 1997-էն ետք: Մելգոնեանի ու ազգ. առաջնորդարանի պարբերականներն ալ լռած են: Զիմա կը գործեն համացանցային լրատու քանի մը հարթակներ ու մանաւանդ տիկ. Երան Գոյումճեանի խմբագրած «Ազատ Խօսք» առցանց ամսաթերթը, որ կա- նոնաւոր հրատարակութիւն մըն է, 2011-էն իվեր: Անոնցմէ քաղելով՝ ահաւասիկ կիպրահայ վերջին լուրերու փունջ մը.



Յ. Այնթապեանի դասախօսական երկնիկ

ԼԻՄԱՍՈՒԻ Ս. Գեորգ եկեղեցոյ սրահին մէջ, 10 Ապրիլին, բանախօսութիւն մը տուած է տոքթ. Յակոբ Այնթապեան (Ամերիկայէն ժամանած), «Յայ լեզուն եւ հայրենատիրութիւնը» խորագրով: Ան շեշտած է, թէ առանց մայրենի լեզուին նկատմամբ ցուցաբերուած հոգատարութեան՝ ազգային միւս բոլոր արժէքները հետզհետէ կը գունաթափին ու կ'արժեզրկուին: Երեկոյից ընթացքին Զայաստանէն ժամանած Իննա Խոջամիրեան ընթերցումներ կատարած է Աւետիք Իսահակեանի, Չահրատի եւ օրուան բանախօսին բանաստեղծութիւններէն: Փակման խօսք արտասանած է Լիմասոլի հոգեւոր հովիւ Յովհաննես Ծ. վրդ. Սաղտըճեան:

ՆԻԿՈՍԻՈՑ մէջ, 25 Ապրիլին, տեղւոյն հայութիւնը, համայնքային ու միութեանական իր բոլոր կառոյցներուն համերաշխ գործակցութեամբ, նշած է Զայոց ցեղասպանութեան 111-ամեակը: Գլխաւոր յուշահանդէսը կայացած է Ս. Աստուածածին եկեղեցոյ շրջափակին մէջ գտնուող Հայ Առաքաւորաց յուշակոթողին առջեւ, երեկոյեան, յետ աւանդական բողոքի քայլարշաւին: Ի միջի այլոց ներկայ եղած են պետական-կառավարական ղեկներ ու տարբեր եկեղեցիներու հոգեւոր ներկայացուցիչներ: Նախ կատարուած է հոգեհանգստեան արարողութիւն: Այնուհետեւ ուղերձներ կարդացած են կիպրահայոց կաթողիկոսական փոխանորդ Կոմիտաս արք. Օհանեան (հայերէն եւ յունարէն), Զայաստանի դեսպանուհի Իննա Թորգոմեան, հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդապետ Մահտեսեան եւ Սթրովոլոսի (Նիկոսիոյ մեծագոյն թաղամասը) քաղաքապետ Ստաւրոս Ստավրիսիտիս: Եկեղեցոյ երգչախումբը երգած է ազգային-հայրենասիրական երգեր:



Նիկոսիա

ԼԻՄԱՍՈՒԻ հայութիւնը եւս ոգեկոչած է Ապրիլեան Մեծ Եղեռնի զոհերուն յիշատակը քանի մը ձեռնարկներով: 17 Ապրիլին, Զամազգայինի նախաձեռնութեամբ, ցուցադրուած է 2007-ին նկարահանուած «Արտոյտներու ազարակը» իտալական ֆիլմը, որ կը պատմէ հայ ընտանիքի մը ողիսական եղեռնի շրջանին (սոյնանուն վեպին հեղինակը իտալաբնակ Անթոնիա Արսլանն է): 23 Ապրիլի երեկոյեան կայացած է ջահերթ, ապա՝ մումավառութիւն եւ ծաղկեմատոյց, Ս. Գեորգ եկեղեցոյ բակը գտնուող խաչ-քարին առջեւ: Այնուհետեւ տեղի ունեցած է յուշահանդէս, որուն իրենց մասնակցութիւնը բերած են Նարեկ վարժարանի սաներն ու ԿԵՄ-ի երիտասարդներ: Օրուան բանախօսը եղած է Յակոբ Գազանճեան (ազգ. վարչութեան ատենապետ): Փակման խօսքը արտասանած է Յովհաննես Ծ. վրդ. Սաղտըճեան:



Ջահերթ Լիմասոլի մէջ (Ապրիլ 23)

ԼՆՈՒՆԱԶԱՅԻ մէջ ալ ոգեկոչուած են եղեռնի զոհերը: Ապրիլ 24-ին համայնքը համախմբուած է Ս. Ստեփանոս եկեղեցին, ուրկէ թափօրով երթ կատարուած է դէպի Զայոց ցեղասպանութեան յուշակոթող:



Լ. Ը.

## ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ-39

# ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պատահականութիւնը բառ մըն է, որուն իմաստը շատ ընդարձակ է: Պատահականութիւնը այն դէպքն է, որ անսպասելի պահուն կը յայտնուի եւ յաճախ բացատրութիւն



չունի: Պատահականութիւնը կը նշանակէ նաեւ **աննախատեսելիութիւն**: Ֆրանսերէն **hasard** բառին ծագումը արա-

### ՍՈՒՐԵՆ ՇԵՐԻՔ (Ալֆորվիլ)

բերէն է եւ փոխանցուած՝ սպաներէնէն. al-zahr (zahr կամ zar հանրածանօթ նարտ խաղին խաղաքարն է), որ կը նշանակէ «ըստ բախտի»: Պատահականութիւնը առօրեայ կեանքի մէջ գործնական կիրարկութիւններ ունի ինչպէս վիճակահանութիւնը (tirage au sort), որ բախտախաղերու, մրցումներու, որոշ դասաւորումներու ընթացքին կը կիրարկուի: Անոր փոխարէն Զին Կտակարանի մէջ կան դէպքեր եւ պատահարներ, ուր պատահականութիւնը անսպասելի չէ նկատուած, այլ ընդունուած է որպէս **աստուածային հրահանգ**: Այսօր պատահականութիւնը գիտականօրէն կապուած է **հաւանականութեան** (probabilité) թուաբանական բացատրութեան հետ:

Այսուհանդերձ շատ անգամ հարց կը ծագի թէ պատահականութեան մէջ **դիտաւորութիւնը** եւ **պատճառաբանութիւնը** բացակայ են միշտ: Եթէ իսկապէս դիտաւորութիւնը թաքնուած է պատահականութեան մէջ, մենք իրագել չենք կրնար ըլլալ առկէ: Պատահականութիւնը երեւցող բան մըն

# ԲԱՌԻ ԵՒ ԳՈՅՆԻ ՄԻՋԵՒ

Երկաթը կը ժամգոտի անգործութենէն, ջուրը լճացումով կը կորսնցնէ իր մաքրութիւնը, մինչ միտքը՝ իր կենսունակութիւնը: (Լեոնարտո տա Վինչի)

Կը թուի, թէ ստեղծագործ մարդը կարելի չէ տեղաւորել մէկ սահմանում մէջ: Ան եղած է ու կը մնայ սահմաններու վրայ կեցած այն եակը, որ միաժամանակ կը փորձէ խօսիլ տարբեր լեզուներով, որովհետեւ երբեմն մէկ լեզուն բաւարար չէ արտայայտելու համար այն, ինչ կուտակած է ներաշխարհը:

Արուեստագետի ներաշխարհին մէջ հասունացած բառն ու գոյնը չեն հակադրուիր, ընդհակառակը՝ կ'ամբողջացնեն նոյն գաղափարին տարբեր շերտերը: Պատմութեան մէջ այդ երկակիութիւնը յաճախ ընկալուած է ոչ թէ որպէս համադրութիւն, այլ որպէս անտարբեր ամբողջութիւն՝ երեսակայութիւն, որ արտայայտուելու համար կ'ընտրէ տարբեր միջոցներ:

Այդ ամբողջութեան ամենավառ մարմնաւորողը, անշուշտ, Լեոնարտո տա Վինչին է: Անոր համար արուեստը նկար մը, պատկեր մը ստեղծելու ճիգ չէ, այլ հանճարեղ փորձ է հասկնալու աշխարհի անյայտ կառուցուածքը:

Լեոնարտո համոզուած էր, որ գեղանկարչութիւնը եւ քանդակագործութիւնը ոչ թէ տարբեր արուեստներ, այլ մօտեցումներ են, որոնք կը ձգտին հասնելու նոյն ճշմարտութեան:

Մէկը կը շարժի գիծի, գոյնի եւ մակերեսային միջոցով, միւսը՝ նիւթի եւ ծաւալի, սակայն նպատակը նոյնն է՝ փորձել հասնիլ մարդու եւ բնութեան էութեան:

Հօր արուեստագետին ստեղծագործական մտածողութեան հենքը մարդուն կազմախօսութիւնն է, բնութեան դիտարկումը եւ լոյսի ուսումնասիրութիւնը:

Տա Վինչին համար մարդկային մարմինը ոչ թէ տեսանելի ձև է, այլ ներքին օրէնքներու արտայայտութիւն է: Եւ այդ է պատճառը, որ իր նկարներուն մէջ ձևը պատահական չէ, այլ արդիւնք է գիտելիքի եւ դիտարկումի:

Ի վերջոյ այդ մօտեցումով է, որ ան կտաւի վրայ զարգացնող իր մեղմ, գրեթէ մշուշային անցումները, ուր գիծը ոչ թէ կը սահմանէ ձևը, այլ կը բացայայտէ: Քանդակագործական մտածողութիւնը, նոյնիսկ հարթութեան վրայ, անոր օգնած է զգալու ծաւալը, այդպիսով գեղանկարը մակերեսայնութենէն հասցնելով խորքի:

Լեոնարտոյին համար արուեստը նաեւ մտածելու եղանակ էր: Ան գրեց առակներ, հեքիաթներ, ծաւալուն թրաքթաթեր, որոնց մէջ արուեստը, առանց յստակ բաժանումներու, կապեց գիտութեան: Անոր ամենէն յայտնի աշխատութիւններէն մին՝ «Թրաքթաթ գեղանկարչութեան մասին», ոչ միայն թեքնիք ուղեցոյց, այլեւ աշխարհը տեսնելու փորձ է:

Այդ էջերուն մէջ ան փորձած է պատասխանել ոչ միայն «ինչպէս նկարել», այլ նաեւ՝ «ինչպէս տեսնել» հարցումներուն: Իսկ այս արդէն, արուեստի սահմաններէն դուրս՝ մտածողութեան հարց է:

Թերեւս հոս է, որ գործն ու նկարիչը կը դադրին երկու տարբեր կերպարներ ըլլալ: Անոնք մէկ մարդու երկու շնչառութիւններ են, մէկը բառերով, միւսը՝ պատկերներով, բայց երկուքն ալ կը ծառայեն նոյն անտեսանելի նպատակին՝ հասկնալ եւ բացայայտել իրականութիւնը:

Հաւանաբար այս է պատճառը, որ արարումը չի սահմանափակուիր մէկ ձևով, այլ նոր լեզու կը փնտռէ, քանի որ իրականութիւնը բազմաշերտ է անկարելի է գայն սպառել մէկ արտայայտչաձևով:

«Ատելութիւնը ներշնչէ ինծի աշխարհի եւ ունայնութեան հանդէպ,

Որ չհասնին ինծի վաղեմի կանչերը: Մահուան ժամուն կեանք կը սպասեն: Բայց յոյս չկայ, ամէն բան պիտ յայտնուի խաւարի մէջ: Տիրողը ստուն է, ճշմարիտն իր աչքը կը պահէ: Որքան ուժգին է ցնորհուն մեր ձգտումը, Այնքան երկար է գայն վտարելու ժամանակը, Մինչ տնջանքի դէմ կամքը տկար է»:

Այս տողերը ուրիշ հանճարեղ իտալացիի մը՝ II Divino - Աստուածային արուեստագետ Միքելանճելոյի հնչեակներն է (sonnet): Մեծ արուեստագետը ունի աւելի քան 300 հնչեակ եւ սիրերգ, որոնք իր մահէն շուրջ վաթսուն տարի ետք հրատարակած է անոր մեծ եղբոր որդին, որ կը կրէր նոյն անունը՝ Միքելանճելո Պոլոնարոյի...

Կայ, սակայն, հետաքրքրական նրբութիւն մը. յիշեալ ազգականը որոշ չափով «մշակած» է բնագիրը... Ան հարթած է կտրուկ ձևակերպումները, փոխած է շատ մը բառեր, նոյնիսկ անձերու դերասաններ... Ինչո՞ւ, պիտի հարցնէք արդարօրէն, որովհետեւ Միքելանճելոյի քերթուածները եղած են շատ անձնական, եւ իր ժամանակի համար մեծ մասամբ... «անյարմար»:

Տարածուած տեսակետ կայ այն մասին, որ Միքելանճելո Պոլոնարոյի շատ նուրբ եւ մտաւոր-հոգեւոր յարաբերութեան մէջ եղած է մարքիզուի Վիթթորիա Զլոնսայի հետ:

Վերջինս եղած է բանաստեղծ, այդ օրերու մտաւորական շրջանակներու աչքի գարնող դէմքերէն: Ծանօթութիւնը կայացած է Միքելանճելոյի հասուն տարիքին, եւ երկուքին միջեւ ձևաւորուած է խորունկ մտերմութիւն մը:

Ուսումնասիրողներէն շատերու կարծիքով, Միքելանճելոյի որոշ հնչեակները նուիրուած են մարքիզուիին եւ լի են հիացումով, մաքուր ու ոգեղեն սիրով:

Ահա այդ սիրերգերէն (madrigal) մէկը, որ փորձ ըրած էմ թարգմանել անգլերէն տարբերակէն.

«Շատերու՝ հազարաւոր սիրահարներու համար, Դուն՝ տիկին, արարուած էիր հրեշտակային կերպարանքով:

Թերեւս գոց երկիւնքները կը ննջեն հիմա, Մինչ միայն մէկը կը վայելէ շնորհն այն, որ բոլորին համար էր նախատեսուած:


Այս, մեր հառաչանքներուն վերադարձուր Աչքերու լոյսը արեւային, Որով գրկուած՝ ան, Ով ծնած է վիշտի մէջ, Կը թորշուժի այդ բարիքէն հեռու»:

## ԱՆԻ ԹՈՐԱՆԵԱՆ (ԵՐԵՎԱՆ)

Այս տողերուն մէջ կարելի է զգալ ոգեղեն սիրոյ լեզուն, որ շատ զգացական է, եւ գուրկ երկրային անմիջականութենէ: Ներկայացուած օրինակը անգամ մը եւս կ'ապացուցէ, որ արուեստագետի մը տարբեր արտայայտչաձևերը յաճախ կը ծնին ոչ միայն ստեղծագործական, այլ նաեւ խորապէս մարդկային ու հոգեւոր կապերէն:

Հիմա անցում կատարենք դէպի ԺԹ. դար, ընտրելու համար Ֆրանսական գրականութեան հսկաներէն՝ Վիթթոր Հիլկոն (1802-1885): Վստահ եմ շատերու համար գաղտնիք են անոր մեղանկարները, որոնց մէջ դիտորդը պիտի գտնէ մնայլ ու խորհրդաւոր այն մթնոլորտը, որ առկայ է անոր գրականութեան մէջ:

Հիլկոյի գրական երկերը եւ մեղանկարները այնքան հարազատ իրար, ծնունդն են նոյն երազային ու փոթորկոտ ներաշխարհին:



Ընդամենը քսանութ յարեկան Վիթթոր Հիլկոյի՝ «Մահապարտի վերջին օրը» վեպը, իր ժամանակներու համար եղաւ իւրօրինակ մարդասիրական կոչ: Վեպին ամբողջ երկայնքով Հիլկո, գրեթէ հրաժարած արտաքին անցուղարձերէն, ընթերցողին առջեւ բացած է մահապարտի դատապարտուած մարդու ներաշխարհը: Ան կարելորած է ոչ միայն դատավճիռը, այլ հոգեկան տառապանքը, մահուան հանդէպ վախն ու մարդկային արժանապատուութեան ողբերգական վերագնահատումը: Եւ այս բոլորը՝ բացառիկ ոճով:

Մարդկային կարեկցանք եւ ներքին մռայլութիւն - յատկաւիշեր, որոնք աւել ուշ պիտի յայտնուէին նաեւ Հիլկոյի մեղանկարներուն մէջ:

«Յիրաւի, այն ինչը դուք ազատութիւն էք կոչում, ամենամաքուրն է այդ շղթաներից, թէեւ նրա օղակները փայլում են արեւի տակ եւ կուրացնում են ձեր աչքերը: Եւ ինչը, եթէ ոչ ձեր էութեան մասնիկները, դուք կ'ուզենայիք մի կողմ շարժել, որպէսզի ազատութիւն ձեռք բերէիք: Եթէ դա անարդար օրէնք է, որը դուք կ'ուզէիք փոխել, ապա այդ օրէնքը հէնց ձեր ձեռքով է գրուել ձեր ձակատիւն: Դուք չէք կարող ջնջել այն, եթէ նոյնիսկ կրակը նետք օրէնքների գրքերը. դուք չէք կարող լուալ այն ձեր դատարանների ձակատներից, եթէ նոյնիսկ ամբողջ ծովի ջուրը լցնէք դրա վրայ: Իսկ եթէ դա բռնակալ է, որին դուք կ'ուզենայիք գահընկէց անել, ապա նախ նայէ՛ք քանդուած՝ է արդեօք նրա գահը, որ ձեր հոգում է կառուցուած»:

Այս մէկը արդէն, վստահ եմ գուշակեցիր, սիրելի ընթերցող, կը պատգամէ աշխարհառեակ լիբանանցի գրող, արուեստագետ Ճիպրան Խալիլ Ճիպրանի գրիչին եւ հատուած մըն է անոր «Մարգարէն» երկէն, ուր հեղինակը կը գրէ ազատութեան մասին:

Իւրօրինակ մթնոլորտ կը թելադրեն գրող-նկարիչին կապոյտ երանկները, որոնք կարծես ոչ թէ գոյն, այլ ներքին վիճակ են՝ լռութիւն, հոգեւոր խորութիւն, երբեմն պարուրուած մեղմ թախիծով:



Ճիպրանի գրականութիւնն ու նկարները կ'ապրին նոյն շունչով: Անոր երկերուն եւ նկարներուն մէջ չկայ աղմուկ կամ սրութիւն: Խօսողը ներաշխարհն է: Անոր կապոյտը մեղմիւ կը յուշէ, որ իր կերպարները կը պատկանին վերերկրային իրականութեան:

Եթէ բաղդատելու ըլլանք Հիլկոյի եւ Ճիպրանի նկարները, պիտի նկատենք անոնց ակնբախ հակադրութիւնը: Առաջինին փոթորկոտ մեղանկարները եւ երկրորդին լուսաւոր, կապտաւուն, գրեթէ հոգեւոր պատկերները անմիջական հայելացումն են իրենց գրական երկերուն:

Մէկուն ներաշխարհը կը բացուի որպէս ստուեր ու փոթորիկ, միւսինը՝ որպէս լուսն ու մրմնջուն աղօթք:

Իսկ ո՞վ կամ ովքե՞ր են հայ իրականութեան բառն ու գոյնի վարպետները: Պետք է յետադարձ հայեացք ուղղել դէպի միջին դարեր, եւ գտնել մեր ծաղկող գրիչները՝ Թորոս Ռոսլին, Գրիգոր Խլաթեցի, Թորոս Տարնակցի եւ այնքան ուրիշներ:

Երթուածներ չէ գրած Ռոսլին (1210-1270) սակայն յիշատակարանները վերածած է հարուստ գրական ժանրի: Իր 1262 թուականի Աւետարանի (Լոնտոն, Ուոլթըրսի արուեստի թանգարան) ընդարձակ յիշատակարանին մէջ ան պատմական վաւերագրութիւնը միախառնած է յուզական արձակին.

«Աւարտեցաւ Աւետարանը 1262 թուականին... Հռոմկայ աթոռամիտի, մեր Փրկիչի եւ Նուրբ Գրիգորի հովանքի ներքոյ, անարժան գրիչ Թորոսի ձեռամբ, մականունով Ռոսլին կոչեցելոյ: Կ սղաչեմ զձեզ, յիշեցէք իմ հոգեւոր ուսուցիչ Կիրակոսը, ծնողքս եւ եղբայրս՝ Անտոնը:

...Եւ արդ, կը խնդրեմ բոլորիդ, ով կը կարդայ կամ կ'օրինակէ զայս, յիշեցէք մեղքերս Քրիստոսի առջեւ, քանզի ես գայս գրեցի մեծ տագմապի ու դառնութեան ժամուն, երբ մեր թագաւորութիւնը պաշարուած էր անօրէն հազարացիներու (մանուկներու) կողմէ, եւ մեր սրտերը նուաղած էին կործանումի վայելէն»:

Ծաղկող գրիչ, որ արձակը օժտած է բանաստեղծական շունչով:

Գրիգոր Ծերեմն Խլաթեցի (1349-1425) Վասպուրականի դպրոցի բանաստեղծ էր, երաժիշտ, մանրանկարիչ եւ պատ-

# ՀԱԼԷՊԻ ԿԻԼԻԿԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉԻ ԵՒ ՆԱԽԱԿԻԹԱՐԱՆԻ ԱԻԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Դպրոցական աւարտական հանդիսութիւնները եղած են կեանքի հաճելի պահերէն մէկը, եղած են յիշատակելի եւ պատմական, որովհետեւ մանուկներ եւ պարմաններ յուզմունքի եւ ուրախութեան զգացումներով միախառն կը նշեն իրենց մեծ յաջողութիւններու եւ նոր ուղիներուն սկիզբը:

31 Մայիս 2026-ը այդ յիշատակելի օրերէն մէկն էր, երբ հանդիսաւոր կերպով նշուեցաւ Կիլիկեան հաստատութեան մանկապարտեզի եւ 6-րդ կարգի 105-րդ հունձքի հանդիսութիւնը, ներկայութեամբ Ս.Ղ.Յ.Կ.-ի Սուրբոյ Հիւսիսային շրջանի Վարիչ մարմնի անդամներուն, անոր յարակից միութիւններու ներկայացուցիչներուն եւ հոծ բազմութեամբ ծնողներու եւ հիւրերու:



Հայաստանի քայլերգի ունկնդրութենէ ետք, բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Կիլիկեան հաստատութեան մանկապարտեզականուիի տիկ. Նանոր Գոնճայեան Տաղեանը: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ մանկապարտեզէն ներս կատարուող աշխատանքներուն եւ արդի մանկավարժական ըմբռումի եւ հիմքերու գործունէութիւններուն, ապա անդրադարձ կատարեց օրուան թեմային շուրջ, ուր փոքրիկները որպէս նաւաստիներ պիտի գովերգէին ծովերուն, լիճերուն եւ գետերուն խորքերը գտնուող գեղեցիկ եւ հետաքրքրական աշխարհը:

Գեղարուեստական յայտագիրը սկիզբ առաւ մանուկներուն կատարած հայերէն, արաբերէն եւ անգլերէն խմբերգներով, որոնց յաջորդեցին գեղեցիկ ու զարդարուն բեմայարդարման համաշունչ՝ ալիքներու, նաւաստիներու եւ հայկական պարերը, մէջբերումներ ունենալով մանկապարտեզի եւ 6-րդ կարգի աշակերտներու հայերէն եւ արաբերէն արտասանութիւններու կատարողութիւնները, արաբական պարը եւ երգը:

Գեղեցիկ խաղարկութեամբ, մանկապարտեզի փոքրիկ դերակատարները գունազեղ եւ ձկնակերպ տարազներով հանդէս եկան «The Fisherman» թատրոնով, հանդիսատեսը փոխադրելով դէպի ջուրերուն խորքերը գտնուող հրաշալի աշխարհը:

Վերջընթեր օղակն էր 6-րդ կարգի շրջանաւարտներուն տպաւորիչ արտայայտութիւններով, գեղեցիկ պարումներով եւ տեսերիգի պատկերներով առընթեր, ներկայացուած Գեորգ Եմինի «Յաւերժի ճամբորդը» ստեղծագործութիւնը, ներկաները փոխադրելով դէպի Մայր հայրենիք, դէպի մեր մշակոյթը եւ մեր դարաւոր պատմութեանը:

Կարելի չէր չիշատակել Կիլիկեան հաստատութեան հիմնադրման 105-ամեակը, հետեւեալ 6-րդ կարգի շրջանաւարտները հակիրճ կերպով ներկայացուցին Կիլիկեան կրթօճախին պատմութիւնը, յիշատակեցին հիմնադիրներուն եւ տնօրէններուն առաքելական գործունէութիւնները եւ ապա վերանորոգեցին իրենց ուխտը բարի երթ մաղթելով Կիլիկեան կրթօճախին:

Որպէս «Հուսկ բանք», խօսք առաւ Կիլիկեան հաստատութեան տնօրէնուիի օրդ. Վարդուկ Չաթալպաշեանը: Ան հպարտանքի եւ ակնածանքի խոնարհում յոյճ Կիլիկեան հաստատութեան հիմնադիրներուն եւ 105 տարիներու ընթացքին իրենց ներդրումը ունեցող նուիրեալ ծառայողներուն, որոնց անսակարկ գոհողութեան շնորհիւ Կիլիկեանը գոյատեւեց դար մը:

Ան բարձր գնահատեց ուսուցիչներուն հետեւողական ուսուցման աշխատանքները, որոնց արգասիքը եղան այսօրուան հունձքը, ապա խօսքը ուղղելով շրջանաւարտներուն, թելադրեց ըլլալ տիպար ու ջանասեր հայորդիներ եւ հաւատարիմ գաւակներ Կիլիկեանի ուխտին:




Հասած էր վկայականներու տուչութեան պահը: Մանկապարտեզի եւ 6-րդ կարգի շրջանաւարտները, զուգահեռ տեսերիգի պատկերներու, հանդէս եկան ուղղերձներով, ապա ստացան իրենց վկայականները: Տեղի ունեցաւ նաեւ 2. կարգի գերագանց աշակերտներու պարգեատրում եւ Ա. կարգէն մինչեւ 2. կարգի հայերէնի գերագանցիկ աշակերտներու գնահատանքի բաշխում, ինչպէս նաեւ «Հայաստանի կրիստոսագործների Միութեան» կազմակերպած ցուցահանդէս-մրցոյթին մասնակցած եւ յաջողութիւն ձեռք ձգած Դ. կարգի աշակերտուիին «Պատուոյ Գիր»-ի տուչութիւնը:

Հանդէսը իր աւարտին հասաւ յոտնկայս «Կիլիկեանի Քայլերգ»-ի երգեցողութեամբ, հանդիսատեսը դուրս գալով գոհունակ եւ խանդավառ տրամադրութեամբ:

### ԲԱՌԻ ԵՒ ԳՈՅՆԻ ՄԻՋԵՒ

մագիր: Անոր ամենէն յայտնի գործերէն է «Յիշատակարան աղետից» երկարաշունչ չափածոյ պատմութիւնը (1422) ուր ան 460 տողերու մէջ կ'ամփոփէ Լենկթեմուրի եւ այլ բռնակալներու աւերիչ արշաւանքներուն նկարագրութիւնը:

«Շատք ի սրոյ մոցա մեռան,  
Ի'այլքըն փայտեան եւ գերեցան,  
Կողոպտեցան եւ գերեցան,  
Չիոց կոխան սատակեցան,  
Խաղք խայտառակ թալանեցան,  
Ի սար լ' ի ձոր փայլըստական:  
Ընդ որ փայտեան, հալածեցան,  
Ի ինքեանք, միմեանց դահիճ դարձան,  
Անթիւ բռզակ էր, գոր տարան,  
Աղէկ ծիան եւ շատ ուղտան:  
Կին եւ տղայքն ի թիւ չանկան  
Չոր գերեցան եւ կոխեցան»:



Խլաթեցին գրած է նաեւ ծիսակարգային բանաստեղծութիւններ՝ տաղեր: Յին, քայքայուած ձեռագրեր նորոգելու ընթացքին (ինչպէս Մովսիսի 1406 թուականի Աւետարանը), ան ապագայ ընթերցողին ձգած է այսպիսի չափածոյ զգուշացումներ, մտատրոպայէ այսպիսի բովանդակութեամբ՝

«Ով ընթերցող, որ այսօր բռնած էս սուրբ գիրքն այս, Յիշէ, որ զայն գրողին ձեռքը հող պիտի դառնայ: Զեռու՛ պահէ ջուրէն, պաշտպանէ գողերու ձեռքէն, Որպէսզի չկանգնիս երկնային Թագաւորի դատաստանին առջեւ»:



Գլածորի տաղանդաւոր մանրանկարիչ ու գրիչ, որի Սարգիս քահանայի եւ Մարիամի, Թորոս Տարօնացի, ծնունդով Մուշ քաղաքէն (ԺԴ դար), եղած է ոչ միայն բացառիկ ծաղկող, այլեւ աշխարհիկ տաղասաց (երգահան): Ան յաճախ հայկական ժողովրդական արուեստի եւ բանահիւտութեան տարրեր ներմուծած է հոգեւոր նկարներու մէջ: Իր «Տաղ Վարդանանց» տաղին մէջ ան գործածած է իւրայատուկ կշռոյթ ունեցող երաժշտական արձակ մը, կարծես բառերու միջոցաւ նկարելով այնպէս, ինչպէս պիտի նկարէր գոյնով ու ներկով:

«Հայաստանի քաջ առիճները անոր կանգնեցան յորձանուտին դէմ,  
Հաւատքը՝ գրահ, եւ երկինքը իրենց թիկունքին:  
Անոնց արիւնը դաշտերը ներկեց այն վառ կարմիրով,  
Որ մեր երկրային խաւարը դարձուց յաւերժական լոյս»:

Միջնադարեան հայկական ձեռագրեր ծաղկելը սուկ գեղագրողով չէր, այլ... տեսողական աստուածաբանութիւն: Մեր ծաղկողները թանկարժէք գունանկարներ կը գործածէին, ինչպէս՝ լաջուարդն ու ոսկեթերթը, որոնց կիրառումը հոգեւոր ու տիեզերական նշանակութիւն ունէր: Ատոնք նաեւ եղած են քօղարկուած իմաստ պարունակող խորհրդանշաններ: Տարօնացին, օրինակ, առատօրէն գործածած է վառ գոյներն ու ոսկեթերթը: Եղած է Ռուսիանեան աւանդոյթի հետեւորդ եւ համարուած՝ «Մեծ վարպետ»:

ՄՈՒՍԻՍ ԴԵՄՈՒՐՍ ԳՆԱԿԵԱՆ ԿՈՄՍԱԿՏՈՒԹԻՒՆ  
ԼԻԲԱՆԱՆ ԵՐԶԱՆԻ ՎԱՐՈՉ ՄԱՐՄԻՆ  
ՀՆՉԱԿԵԱՆ ԵԱՀԱՏԱԿԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ  
ԽՕՍԲ Կ'ԱՌՆԵՆ՝  
ԸՆԿԵՐ ԱԼԵԶՍԱՆ ԲԵՕԾԿԵՐԵԱՆ  
Ս.Գ.Հ.Կ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՈՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ  
ԸՆԿԵՐ ՎԱՆԵԻԿ ՏԱԳԵՍԵԱՆ  
Ս.Գ.Հ.Կ. ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐՋԱՆԻ ՎԱՐՈՉ ՄԱՐՄԻՆԻ ԱՏԵՆԱՊԵՏ  
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 19 Յունիս 2026-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Սին Էլ Ֆիլի քաղաքապետարանի սրահին մէջ:  
ԳՐԱԲԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ  
Այսուհետեւ կրնաք օգտուիլ Առողջապահական Ապահովագրութենէն (Medical Health Insurance) մեր դարմանատան միջոցով սերտուած գիներով ինչպէս նաեւ վճարումի դիւրութիւններով:  
Յաւելեալ մանրամասնութիւններու համար կը խնդրուի հեռաձայնել հետեւեալ թիւերուն՝ 01/560 704 եւ 71/356 035

### Շարունակուած էջ 3-էն

Լաջուարդին գունանկարը, որ լանթօնէ կիրառուած է մեր ծաղկողներուն կողմէ, հսկայական ծախսերով կը ներմուծէին ժամանակակից Աֆղանստանի Պատարաշանի հանքերէն, եւ քանի որ հազուադէպ էր ու դիմակայուն (դարերու ընթացքին կը պահպանէր իր գոյնը), զայն կը պահէին մանրանկարներուն ամենէն կարեւոր տարրերուն համար:

Լաջուարդը նաեւ խորհրդանշան էր Աստուծոյ ներկայութեան: Յին Կտակարանի մէջ Աստուծոյ գահին պատուանդանը կը նկարագրուի շափիւղի կամ լաջուարդի երանգներով: Յայ վարպետները այդպէս կը պատկերէին երկինքը, Զրիստոսի պատմութեանը եւ Սուրբ Պատարագի տեսարաններուն խորքը՝ ցոյց տալու համար, որ տեսարանը տեղի կ'ունենայ Աստուծոյ յաւերժական տիրոջին մէջ: Կապոյտը նաեւ երկինքն էր ու տիեզերական կարգը: Մութ լաջուարդով պատելով մանրանկարին ետնախորքը, Թորոս Ռուսին եւ այլ ծաղկողներ դիտողին կը յուշէին, որ Աւետարանին բնագիրը վեր է երկրայինէն եւ կը պատկանի անմահ տիեզերքին:

Ուշ միջնադարուն կապոյտը սերտօրէն կ'ապուցեալ նաեւ Աստուածամօր հանդերձներուն հետ՝ խորհրդանշանաբար անոր երկնային մաքրութիւնը՝ զուգորդուած երկրային խոնարհութեան հետ:

Գանջ ոսկեթերթին՝ անստեղծ լոյսին... Ոսկին, որեւէ ներկ գործածելէ առաջ, ձկնա սոսինձով կամ մատոյրի հիւթով պատրաստուած նուրբ նիւթով մը կը քսէին սպառնալիքներ, որ յետոյ կը յղկէին ազաթ քարով՝ մինչեւ հասնէին հայելային ողորկութեան:

Զրիստոնէական աստուածաբանութեան մէջ Աստուած Լոյս է: Ոսկին չէր կրնար խորհրդանշել աշխարհիկ մետաղական հարստութիւնը: այն կը ներկայացնէր Անստեղծ Լոյսը՝ աստուածային այն ճառագումը, որ արդէն գոյութիւն ունէր նախքան Գիրք Ծննդոցին մէջ արեւի եւ լուսնի արարումը:

Առատօրէն կ'ունեցօժէին խորաններուն եզրաշերտերը, սուրբերուն լուսապսակներն ու ետնախորքերը: Երբ վանականը ձեռագիրը կը կարդար մոմի տկար լոյսին տակ, ոսկեթերթը կ'որոսար բոցին թրթռնը, կ'արտացոլէր զայն, կենդանութիւն հաղորդելով էջին: Ասիկա տեսողական խաբկանք կը ստեղծէր, ներշնչելով, որ սուրբ կերպարները երկնային աշխարհէն քայլ կ'անեն դէպի նիւթական աշխարհ:

Ոսկին չի խամրիր, չի ժանգոտիր եւ չի քայքայիր: Ուստի, սրբազան տաք ոսկեթով գրելը կամ սուրբ ոսկէ ետնախորքին վրայ պատկերելը կը խորհրդանշէր Աստուծոյ խօսքին անապական ճշմարտութիւնը:

Երբ Թորոս Ռուսին կամ Թորոս Տարօնացի շողողացող ոսկեթերթը կը դնէին մութ լաջուարդին քով, անոնք կը պատկերէին Երկինքի (կապոյտ) եւ Աստուածային Ընդհանրի (ոսկի) տիեզերական հանդիպումը: Ասիկա Մարմնացումի խորհրդանշանն էր՝ աստուծոյ անհուն փառքին փոխադրումը այժի կամ հորթի կաշիով պատրաստուած մագաղաթին վրայ:

Անշուշտ կար նաեւ Որդան կարմիրը: Յայ վանականները տարբեր քարեր ու բոյսեր աղալով, միախառնելով, այնպիսի մեղաներ կը պատրաստէին, որոնք դարերու ընթացքն իսկ անկարող եղաւ խամրեցնել:

Ահա այսպէս, սիրելի ընթերցող, եւ շարքը դեռ կարելի է երկարել ու հասնիլ մինչեւ Չապլէ Պոյաճեան, յետոյ նաեւ Յակոբ Յակոբեան... Սակայն այս անգամ՝ այսքանը, քանզի գիրն ու գոյնը դեռ երկար պիտի շարունակեն խօսիլ իրարու հետ:

### ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

#### Շարունակուած էջ 2-էն

Է, որուն պատճառները կ'անգիտանանք: Սակայն Աստուած ակամայ կամ արկածեալ չի գործեր, մէկ խօսքով Ան ոչ մէկ բան պատահականութեան կ'ենթարկէ: Ըստ մեծ գիտնական Ալեքսանի, «պատահականութիւն գոյութիւն չունի», երբ ան արտասանէ իր նշանաւոր խօսքը. «Աստուած խաղաքար չի նետեր» (Dieu ne joue pas aux dés): Աստուածաշունչի պատգամներուն կապուած փիլիսոփայական տեսակետը պատահականութիւնը կը վերագրէ որոշ մարդոց այն տգիտութեան, որ կ'անտեսէ դէպքերու յստակ սակայն թաքնուած պատճառները:

Ստոյիկեանները այս ուղղութեանը հաստատամտական (deterministe) տեսակետ որդեգրած են: Կիկերոն հետեւեալ ձեւով արտայայտուած է պատահականութեան մասին. «Ոչինչ կը պատահի, որ պետք չէր որ պատահի, առաւել էս բնութեան մէջ ոչինչ տեղի կ'ունենայ առանց անոր իրականացումը պատրաստող պատճառի: Եթէ գոյութիւն ունենար մէկ որուն բանականութիւնը կարենար զանազանել իւրաքանչիւր պատճառ զայն պատրաստող պատճառէն, այդ անձը վստահաբար երբեք սխալ պիտի չգործէր իր նախատեսութիւններուն մէջ: Որովհետեւ ան որ կը ճանչնայ ապագայ պատահարները պատրաստող պատճառները, անհրաժեշտօրէն գիտէ այն ինչ որ պիտի պատահի աւելի ուշ»: Յաստատամտութեան գաղափարը շրջան մը տիրապետած է նաեւ գիտական աշխարհի մէջ: Մեծ բնագետ Լաբլաք տիեզերագիտութեան մէջ պաշտպանած է հաստատամտութեան տեսակետը, պնդելով որ Տիեզերքի ապագան բոլորովին յայտնի վերաբերում կը ցուցաբերէ:

Պատահականութիւնը յաճախ շփոթուած է բախտի հետ: Պատահականութիւնը կը սահմանէ դէպքեր կամ պարագաներ, որոնք կրնան տեղի ունենալ եւ կրնան ըլլալ նպատակաւոր կամ ոչ: Իսկ բախտը կը ներկայացնէ կարելիութիւն մը, հաւանականութիւն մը, որ բան մը կարենայ տեղի ունենալ: Այս շփոթիւն հետեւանքով երջանիկ դէպքերու մեկնաբանութիւնը «բախտ»ի եւ «պատահականութեան» միջեւ կը տատանի: Մեծ պարզեւի տիրացող մէկը ոմանց կողմէ կ'որակուի «բախտաւոր», իսկ ուրիշներու կողմէ՝ պատահականութեան որպէս հերոս:

ՄԱՐԿԱԿԱՆԳԱԿԱՆ ԶԵՆՆԱԳԻՐՈՒԹԻՒՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎՎԱՆ-ՔԻՆ ՄԷՋ  
Օրինութեամբ  
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՅԱԹԱՌ ԴԱՅՐԱՊԵՏԻՆ  
Կիրակի, 14 Յունիս 2026-ին, Մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պիտի մատուցուի Եպիսկոպոսական Սուրբ եւ Անմահ Պատարագ եւ կատարուի Սարկաւագական ձեռնադրութիւն: Եկեղեցւոյ նուիրապետական առաջին կարգը՝ սարկաւագութիւնը, պիտի ստանան երեք դպրեմանները՝  
Յովսէփ կիսասարկաւագ Գալլապեան  
Սարգիս կիսասարկաւագ Նահապետեան  
Յովհաննէս կիսասարկաւագ Սաղիբեան  
Պիտի պատարագէ եւ ձեռնադրութիւնը կատարէ ԳԵՐՇ. Տ. ՏԱԾԱՏ ԵՊՍ. ԱՇԸԳԵԱՆ (Դիւանապետ Կաթողիկոսարանի)  
Սկիզբ Սուրբ Պատարագի՝ ժամը 09:30-ին  
Ձեռնադրութիւն՝ ժամը 10:00-ին  
Զարոգ՝ ժամը 11:00-ին  
Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի զաւակներուն մասնակցելու այս հոգեպարար արարողութեան եւ աղօթակից դառնալու մեր դարեմանքի ընծայեալներուն, որպէսզի անոնք իրենց աստուածահաճոյ առաքելութեան մէջ մասն հաստատ եւ ամուր քայլերով ընթանան «դէպի աղբիւրը Լոյսին»:  
ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

### ՉՈՂՐԱՊ ԲԵՆԻՇԵԱՆԻ ԱՐՈՒԵՍԸ ՆՈՐ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ ՄԸ ՉՏԱԻ ՃԻՆԻՇԵԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՄԷՋ

29 Մայիս 2026-ին, Ճինիշեան հիմնարկին մէջ բացումը կատարուեցաւ հանգուցեալ հայ արուեստագետ Չոհրապ Բէշիշեանի մէկ կտաւին, որ հիմնարկիս նուիրուած էր իր եղբոր դասեր՝ Թային Գանլէճեանի կողմէ: Արարողութեան ներկայ էին Ճինիշեան Յիշատակի Հիմնարկի վարչական եւ խորհրդակցական մարմիններու ներկայացուցիչներ, արժ. Տէր Սարգիս քիւյ. Սարգիսեանը, Հիմնարկի տնօրէն Զրիստին Դանիելեան Սարգիսեանը եւ աշխատակազմի անդամներ:



Արարողութիւնը սկսաւ Տէր Սարգիս քիւյ. Սարգիսեանի աղօթքով, որմէ ետք ան բարձր գնահատեց օրը. Գանլէճեանի առատաձեռնութիւնը՝ Չոհրապ Բէշիշեանի ժառանգութիւնը անմահացնելու համար անոր արուեստի գործերը հայկական հաստատութիւններուն նուիրաբերելով: Ճինիշեան Յիշատակի Հիմնարկի տնօրէն Զրիստին Դանիելեան Սարգիսեան եւս իր երախտագիտութիւնը յայտնեց օրը. Գանլէճեանի նշելով, որ Չոհրապ Բէշիշեանի կտաւին նուիրաբերութիւնը արժեքաւոր մշակութային եւ գեղարուեստական ներդրում մըն է հիմնարկին համար: Ան շեշտեց նման իմաստալից նուիրատուութիւններու կարեւորութիւնը, որոնք սերտօրէն կը համընկնին հիմնարկի առաքելութեան եւ արժեքներուն հետ:

Օրը. Գանլէճեան իր ուրախութիւնը յայտնեց նկարը նուիրաբերելու առիթին համար՝ բացատրելով, որ արուեստի գործը կը խորհրդանշէ հայ ժողովուրդի պատմութեան ընթացքին կրած դժուարութիւններն ու տառապանքները, սակայն միաժամանակ կը փոխանցէ յոյսի պատգամ՝ իր լուսաւոր երանգներով կը Յիսուս Զրիստոսի կրկնուող պատկերով, որ յաճախակի կերպով ներկայ է Չոհրապ Բէշիշեանի ստեղծագործութիւններուն մէջ: Հանդիպումը արարեցաւ ջերմ զրոյցներով եւ փոխադարձ գնահատանքի արտայայտութիւններով, որոնց միջոցով ներկաները անդրադարձան թէ՛ արուեստագետին մնայուն ժառանգութեան եւ թէ՛ հայկական մշակութային ոգիին շարունակական կենսունակութեան:

www.araraddaily.com  
ARARAD DAILY NEWSPAPER  
Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael  
Beirut | Lebanon | www.araraddaily.com  
email: araradart@gmail.com  
ارارات جريدة سياسية يومية أجنبية  
تصدر عن شركة مسيسية للمباعة والشر (ش.م.م.)